

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՏՄԱԳՐԻՉՆԵՐԸ

(ԺԶ.—ԺԷ. ԴԱՐ)

Ա. ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ

1666 թուականը Հայ մշակույթի եւ տպագրական արուեստի պատմութեան մէջ մի նշանաւոր տարեթիւ է նրանով, որ մի տաղանդաւոր Հայ տպագրիչ, հեռաւոր հռոմէական Ամսդերտամ քաղաքում իր հիմնած տպարանում, նիւթական զոհողութիւններով ու հերոսական ջանքերով տրպագրում եւ Հայ ժողովրդին աւանդ է թողնում առաջին հայերէն Աստուածաշունչ հռոմէական մատենար եւ Հարստացնում Հայ մատենագրութեան դանձարանը:

Դա իր ժամանակի առաջադէմ գաղափարներով տոգորուած եւ Հայ ժողովրդի լուսաւորութեան փութուած Ոսկան Երեւալցի է, հին Հայկական տպագրութեան ամենափայլուն ու պայծառ դէմքերից մէկը, որ 17-րդ դարի կիսում, 1660-ական թուականներին հրապարակ է գալիս եւ Հայ տպագրութեան արուեստի զարգացման գործում նշանակալից դեր կատարում:

Նա խորապէս հասկանում է Հայ ժողովրդի լուսաւորութեան եւ մշակույթի զարգացման խնդրում տպագրութեան արուեստի կառարած խոշոր դերը: Այդ գիտակցութեամբ եւ անսահման հաւատքով նա ո՛չ միայն հիմնում է Հայկական մի տպարան եւ կարճ ժամանակում այն դնում հաստատուն հիմքերի վրայ, այլեւ պատրաստում է Հայ մասնագէտ տպագրիչներ, որոնք ամբողջ հողով նուիրւում են տպագրութեան վսեմ գործին եւ բարձր պահում Հայկական տպագրութեան վեհութիւնը:

Երեւանցու տպագրական արուեստի զարգացման զլխաւոր կենտրոն է հանդիսանում Ամսդերտամ քաղաքը, ուր նա իր տրպագրական եռանդուն գործունէութեամբ ժամանակի առաջադէմ մտաւորականներից սիրւում է եւ յարգւում:

Ոսկան Երեւանցու հռոմէական տպարանը

Հայ տպագրութեան պատմութեան մէջ նշանաւոր տեղ է գրաւում նրանով, որ այնտեղ է առաջին անգամ տպւում Աստուածաշունչ մատենար: Բայց դա պատահականութեան արդիւնք չէ: Ոսկանը հաւատարիմ մնալով իր ժամանակի ոգուն եւ ժողովրդի կրօնական աշխարհայեացքի էութեանը, խորապէս հասկանում է Աստուածաշունչ մատենարի հրատարակութեան կարեւորութիւնը: Նա գիտակցում է, որ Աստուածաշունչը մէկն է ա՛յն արժէքաւոր գրքերից, որն իր սիրոյ, եղբայրութեան եւ աշխարհի խաղաղութեան վեհ ու վսեմ մտքերով կր նպաստի Հայ ժողովրդի բարոյական դաստիարակութեանը, իր աշխիւ ու բարձր գաղափարներով կը լուսաւորէ մարդկանց մտաւոր աշխարհը, կ'ազնուացնէ նրանց սրտերն ու հոգիները, առաջնորդելով նրանց դէպի բարին, գեղեցիկն ու վեհը, միաժամանակ ժողովրդի սրտում վառ կր պահի ընթերցանութեան սէրը:

Երեք հարիւր երկար տարիներ են անցել այն օրից, երբ Ոսկան Երեւանցու Հայ տպարանը Հայութեան պարգեւում է Մեսրոպատառ Աստուածաշունչ առաջին մեծահատոր եւ լուսագոյն հատորը, որով Հայ մատենագրութեան ու մշակույթի պատմութեան մէջ մի նոր շրջան է սկսում:

Դա այն պատմաշրջանն է, երբ նոյն 1666 թուին կատարւում էր պատմական մի այլ ուշադրաւ երեւոյթ, որի էջերը ձեռք տանում են Նոր-Ջուղայի արուարձանը: Նոյն թուականին է, որ Հայ առեւտրական ընկերութեան ներկայացուցիչները եւ 40 Հայ վաճառականներ, Գրիգոր Լուսինեանի զլխաւորութեամբ, Նոր-Ջուղայից ճանապարհւում են դէպի Մոսկուա եւ Ալեքսէյ ցարի հետ առեւտրական պայմանագրի կնքում, որի տրամադրութեան համաձայն առեւտուրի մենաշնորհը պատկանում է միայն Նոր-Ջուղայիցի Հայ վաճառականներին, ո-


բոնք պայմանագիրը հիմք ունենալով իրանական մետաքսն ու բոժոժը տանում են Ռուսաստան եւ վաճառում, իսկ մի մասն էլ Ռուսաստանից փոխադրում են Եւրոպա:

Բայց պատմական դէպքերը հիմք ունենալով, արձանագրե՞նք մի այլ նշանակալից երեւոյթ, որը պատկերում է ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Յակոբ Զուղայեցու եւ Հայ վաճառականների հայրենասիրական ջերմ ոգին:

Առաջին Աստուածաշունչ մատենանի տրպարութիւնից վեց տարի անց, 1672 թը-

նորանոր զրբեր եւ հարստացնում Հայ մատենագրութեան դանձարանը:

Այսօր կարգում ենք Ոսկան Երեւանցու տպագրած հնասիւս գրքերի եւ այլ մատենների յիշատակարանները, որոնցից պարզում է, որ նրա հիմնած տպարաններում տպարդուել են յիսունից աւելի հայերէն տարբեր բովանդակութեամբ գրքեր, որոնց տպաքանակը, մի քանի բանասէրների յիշատակամբ, եղել է 30-40 հազար օտինակ: Դա Հայ տպագրութեան արուեստի պատմութեան մէջ նշանակալից մի երեւոյթ



**ՂԵՍԵՆԱԿԱՆ ԴՕՂԹ ՆԱՀԱՆԳԷ
ԼԻՍՄԱՍ ԽՐՐՈՒՄ ԳՃՆԳԱՊԱՅԷ.
ՅԻՆԷԼ ՏՂՈՐԹՈՒՄ ՆՍԽ ՍՐՐԱՆԷ,
ԳԻ ԲՈՒԺԵՍՅԻ ՆՂԱՐ ԱՄԱՆԷ:**

«ԻՈՒՆԱ ԻՄԱՍՏՈՒՅԵԱՆՑ, ԱՄԱՊԵՐՏԱՄ, 1699.

ԹՈՂԱՄ ՆՊԱՍ. ՆՈՒՐԻԿԱՆԵԱՆԻ ՄՈՆԱՄԱՆՑԱՄ:

ւին, տեղի է ունենում մի պատմական ժողով, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոս Յակոբ Զուղայեցին եւ Հայ վաճառականները մի գաղտնի նամակ են գրում եւ Գրիգոր Լուսինեանի միջոցով ուղարկում Ալեքսէյ ցարին, խնդրելով նրա միջամտութիւնը իրանի Շահի մօտ, որ Հայերը հալածանքների չենթարկուեն:

Այդ ժամանակաշրջանում էլ Ոսկան Երեւանցին Ամպերտամից տեղափոխում է Մարսէլ, ուր նրա համար սկսում է տպագրական գործունէութեան մի նոր շրջան: Իր հիմնած նոր տպարանում Ոսկանը տպում է

է, որն արժեքաւորում է Ոսկան Երեւանցու Հայկական տպագրութեան դժով կատարած խոշոր դերը, որ արժանի է ամենաջերմ գնահատութեան: Բայց նրա տպագրած եւ Հայ ժողովրդին աւանդ թողած գրքերի գլուխ-գործոցն է Աստուածաշունչ հոյաւիպ մատենան, որի հնացած էջերն այսօր թերթում ենք առանձին գուրգուրանքով ու հիացմունքով եւ ցայտուն գաղափար կազմում տաղանդաւոր տպագրչի տպագրական վեհ վաստակի մասին, թէ նա նիւթական ու բարոյական ինչպիսի՜ մեծ գոհողութիւններով, օտար ամբարում, տպել է այդ հոյա-

կապ հատորը, որի մէջ ցոլանում է նրա եռանդուն գործունէութիւնը, աշխատասիրութիւնը եւ անսահման հուսադրութիւնը Այդ ցայտուն կոթողն էլ նրա անունն ու պայծառ յիշատակը վառ է պահելու ապագայ սերունդների սրտերում:

16-րդ դարի Հայկական տպագրութեան արուեստի զարգացման գործում նշանակալից դեր կատարող Ոսկան Երեւանցու մասին չկան կենսագրական հարուստ տեղեկութիւններ: Սեղմ տողեր կարդում ենք միայն ձեռագիր ու տպագիր յիշատակարաններում, որոնք Ոսկան Երեւանցու մասին խօսում են առանձին գնահատանքով, դրուստելով նրա աշխատասիրութիւնն ու նախաձեռնութիւնը, նրա տոկոնութիւնն ու համբերութիւնը, լուսադոյն յատկանիւններ՝ որոնք արժէքաւորում են Հին Հայկական տպագրութեան վաստակաւորի պայծառ կերպարը: Նա իր ուսումն ու կրթութիւնն ըստանում է ժամանակի նշանաւոր գիտնական ուսուցիչների մօտ, բայց չի բաւականանում իր ստացած կրթութեամբ եւ ինքնաշխատութեամբ լրացնում է իր ուսման պակասը, ձեռք բերելով մեն պաշար: Ուսումնասիրում է նաեւ լեզուներ, իսկ տպագրական արուեստում փայլում է իր բացառիկ բնութեականութեամբ եւ իր բեղուն վաստակով:

Բ. ԹՈՒՍԱՏԵՑԻ ԱՐԳԱՐ ԴՊԻՐ

Հայ տպագրական արուեստի առաջին վաստակաւոր մասնիկների գործունէութեան սեղմ պատմութիւնն արձանագրելիս, գծենք 16-րդ դարի կիսում Հայ մշակոյթի եւ տպագրութեան ռազմիրանների շարքում ուրույն եւ առանձնայատուկ տեղ զբաղող մի այլ վարպետ տպագրչի ցայտուն կերպարը: Դա Թոնսատեցի Արգար Դպիրն է, որ 1565 թուականին, հայրենիքից հեռու, գեղածիճաղ Վենետիկում, Հիւսնում է իր տպագրութեան ռազմիրանների շարքում ուրույն եւ առանձնայատուկ տեղ զբաղող մի այլ վարպետ տպագրչի ցայտուն կերպարը: Դա Թոնսատեցի Արգար Դպիրն է, որ 1565 թուականին, հայրենիքից հեռու, գեղածիճաղ Վենետիկում, Հիւսնում է իր տպագրութեան ռազմիրանների շարքում ուրույն եւ առանձնայատուկ տեղ զբաղող մի այլ վարպետ տպագրչի ցայտուն կերպարը:

Դա Թոնսատեցի Արգար Դպիրն է, որ 1565 թուականին, հայրենիքից հեռու, գեղածիճաղ Վենետիկում, Հիւսնում է իր տպագրութեան ռազմիրանների շարքում ուրույն եւ առանձնայատուկ տեղ զբաղող մի այլ վարպետ տպագրչի ցայտուն կերպարը:

Իր մշակութային եռանդուն գործունէութեամբ եւ հայրենասիրական ջերմ ու մաքուր զգացումներով նա ժամանակի ժողովրդից եւ առաջադէմ մտաւորականներից սիրւում է եւ յարգւում:

Դա այն մտայլ պատմաբանն էր, երբ Հայաստանում տիրող պատերազմները, անբուխներն ու գերվարութիւնները ծանր դրութիւն են ստեղծում Հայ ժողովրդի համար եւ վտանգում Հայկական տպարանի եւ մատուցատառ գրքերի գոյութիւնը: Բայց ուշագրաւ երեւոյթն այն է, որ օտար հարձականքներից չեն կարողանում ստրկացրել Հայ ժողովրդի ազատագրական ոգին:

Արձանագրութեան արժանի է նաեւ այն, որ Հայ ժողովրդի պատապարհական վեհ գործին իր ջերմ մասնակցութիւնը բերում է նաեւ Արգար Թոնսատեցին: Բայց դա պատահականութեան արդիւնք չէ: 1562 թուականին, Սեբաստիայում, Հայ ժողովրդի ազատագրութեան վեհ գաղափարով համակալած ժամանակի Հայ մտաւորականները մի գաղափար ժողովում որոշում են մի նամակով խնդրել Հռոմի պապի օգնութիւնը: Այդ կարեւոր նամակի յանձնման պարտականութիւնը վստահում են Միքայէլ Կաթողիկոսի կողմից: Իտալիա ուղարկուող Արգար Թոնսատեցին, որ իր որդու՝ Սուլթանահի հետ ճանապարհւում է դէպի Վենետիկ:

Այդ լուսաւոր քաղաքում Արգար Թոնսատեցին գրաւում են լոյս տեսած տաղարանները, որոնք իրենց բովանդակութեամբ խոր տպաւորութիւն են թողնում նրա գրասէր հոգու վրայ: Շուտով նա Վենետիկից անցնում է Հռոմ եւ կոտարում իր հայրենասիրական ազնիւ սրտակալութիւնը: Հայաստանից բերած նամակներն ու դիմումները յանձնում է պապին, միաժամանակ Վենետիկում հայերէն գրքեր տպագրելու իրաւունք խնդրում:

Նրա ազնիւ ջանքերով էլ Վենետիկում Հայկական տպագրութիւնը կարճ ժամանակում նոր փայլ է ստանում: 1565 թուին նա Հայկական նոր տառեր է ձուլում եւ իր օգնականների հետ տպում է նախ՝ մի օրացոյց, ապա՝ մի պատկերազարդ Ս. զմոռաբան:

Այնուհետեւ նրան տեսնում ենք Հայաստանում:

շատ Պոլսում, ուր նրա տպագրական գործունեությունն համար սկսում է մի նոր շրջան:

Մի քանի բանասերների վկայությամբ՝ Արզար Թոխատեցու ազնիւ ջանքերով Հայկական տպարանն առաջին անգամ հաստատում է Պոլսում 1567 թուին Այնտեղ, Ս. Նիկողայոս եկեղեցու կից բաղժամ մի համեստ տան մէջ, Արզարը կենտրոնացնում է իր սեփական տպարանը եւ առաջին անգամ տպագրում է մի այրենարան: Մի տարի անց՝ 1568 թուին, Արզարի տպարանից լրջա են տեսնում չորս հայերէն գրքեր, որոնց մէջ պատուաւոր տեղ է գրաւում «Տաղարան»ը:

Յաջորդ տարին՝ 1569 թուին, Արզարը Հայ մատենագրութեան է նուիրում երկու արժէքաւոր Հատորների՝ Ներսէս Շնորհալու Պօէմը եւ մի Մաշտոց:

Այնուհետեւ Արզար Թոխատեցու տպագրական գործունեութեան պատմութեան էջերը լուսաբանող տեղեկութիւններ պակասում են: Միայն մի քանի ձեռագիր մատենաների յիշատակարաններէ սեղմ տողերի վկայությամբ՝ այսօրն յայտնի է, որ նա իր կեանքի վերջին յիշանում ձգտում է իրագործել մի վեհ ծրագիր — անցնել էջմիածին եւ այնտեղ տպագրութեան արւեստը զարգացնել եւ դնել զեղարուեստական բարձր սյուսանդանի վրայ: Այդ նպատակով էլ նա Պոլսից ճանապարհւում է էջմիածին, բայց ճանապարհին վախճանում է եւ չի իրականանում նրա հայրենասէր սրտի ազնիւ ձգտումը:

9. ՅԱԿՈԲ ՄԵՂԱՊՈՐՏ

16-րդ դարի Հայկական տպագրութեան պատմութեան մէջ իր պատուաւոր տեղն ունի առաջին Հայ տպագրիչ Յակոբ Մեղապարտը:

Ո՞վ է, սակայն, Հայ տպագրութեան այս պատուաւորը: Նրա մասին կենսագրական փաստական տեղեկութիւններ, ղեծախառնարար, սակաւթիւ են, բայց պերճախօս. միայն այսօրն յայտնի է, որ նա եղել է իր ժամանակի զարգացած ու գիտուն մարդկանցից մէկը, իսկ զրբերի տպագրութեան վեհ աշխատանքն եղել է նրա մտքի

բարձր իդէալը եւ նրա սրտի ազնիւ ձգտումը: Նա առաջին տպագրիչն է որ խորապէս հասկնում է Հայ ժողովրդի լուսաւորութեան ու յառաջդիմութեան գործում զբրբերի կատարած խնդր դերը: Այդ գիտակցութեամբ էլ նա վճռում է սմբողջ հոգով նուիրուել Հայերէն գրքերի տպագրութեան աշխատանքին: Նա իր հետ մի շարք ձեռագիր մատենաներ առած, յաղթահարելով ճանապարհորդական դժուարութիւնները, Հայաստանից գնում է Վենետիկ: Դա այն պատմաշրջանն էր, երբ Վենետիկը յայտնի էր որդեւր տպագրական արուեստի մի խոշոր կենտրոն եւ Հպարտ էր 250-ից աւելի տպարաններով:

Վենետիկում Յակոբ Մեղապարտի արպագրական գործունեութեան պատմութիւնն, փաստական աղբիւրների վկայութեամբ, ընդգրկում է 1512-1513 թուականները: Այդ շրջանում նա Նիւթական գոհոթութիւններով հիմնում է իր սեփական արպարանը եւ Հայ մատենագրութեան նուիրում հինգ տպագրուած գրքեր, որոնք վկայում են Հայ մատենագրութեան զո՞ով նրա կատարած վեհ աշխատանքի մասին: Այդ գրքերից յայտնի է 1512 թուին Վենետիկում տպագրուած «Պարգատումարը»: Դա մի հնամեն օրացոյց է եւ համարւում է Հայերէն առաջին տպագիր գիրքը, թէեւ բանասիրական գիտութեան նոր որոնումները արձանագրել են որ «Պարգատումարից առաջ եղել է աւելի վաղ Հայկական տպագրութիւն: Չնայած երեւոյթին, «Պարգատումարը» համարւում է Հայ տպագրութեան սկիզբը, որով Հայ մատենագրութեան ու մշակոյթի պատմութեան մէջ մի նոր դարաշրջան է սկսւում:

Տպագրիչ Յակոբ Մեղապարտի հայերէն տպագրած գրքերից յատուկ ուշադրութեան արժանի է նաեւ «Պատարագատեարը», որի վրայ տպագրուած շատ փոքր յիշատակաւորում կարգում ենք այսպէս. «Տպագրիչ Յակոբ Մեղապարտ, Վենետիկ, 1513»։ Այս սեղմ բայց խոսուն արձանագրութիւնն էլ վկայում է, որ Յակոբ Մեղապարտի տպագրական գործունեութեան զլիաւոր վայրն եղել է Վենետիկը:

Սակայն 1513 թուականի վերջում Վենետիկի իշխանութիւնը փակում է նրա տպա-

բանը, թերեւս ներթափանցող, եւ զբերում նրան հայերէն գրքեր հրատարակելու իրաւունքէն:

453 երկար տարիներ են անցել, որ Յակոբ Մեղակարտը գերեզման է իջել, բայց նա չի մեռել, այլ իր վեհ վաստակով ապրում է Հայ գրասէր ժողովրդի սրտում:

Վենետիկում հայերէն գրքերի հրատարակութեան սեղմ պատմութիւնը գծելիս նկարենք նաեւ վաստակաւոր տպագրիչ Յովհաննէ Տէրգնցու գիմնաստեղծութիւնը, որ մեղանից 381 երկար տարիներ առաջ, 1585 թուականին, Հռոմում, Արգար Դպրի որդի Սուլթանահի հետ, տպագրում է մի նոր դիրք, իսկ երկու տարի անց՝ 1587 թուին, Վենետիկում, իր ձուլած տառերով, տպում Սաղմոսարան:

Սնտուանայի է նաեւ տպագրիչ Բաղիշեցի Բախանայ Քարմատանցը, որ հրատարակ է գալիս 1616 թուին եւ Լեւաստանի Լեւոյ քաղաքում հիմնում է մի տպարան: Դրա տպագրած են Հայ մատենագրութեան ուսանող թողած գրքերից մեզ յայտնի են Սաղմոսարանը եւ Բժշկական Մատենան:

Արձանագրենք նաեւ վաստակաւոր տպագրիչներ Յովհաննէ Անկիւրացու եւ Յովհաննէ Ջաղայեցու անունները, որոնք իտալիայում, յաղթահարելով մի շարք դժուարութիւններ, տպագրում են մի քանի գրքեր եւ հարստացնում Հայկական տպագրութեան դանձարանը:

Հայ հին տպագրութեան պատմութեան մէջ իր ուրոյն տեղն ունի 17-րդ դարում Նոր-Ջուղայի Ս. Ամենաիրկէան Վանքում հիմնուած տպարանը, որի գոյութեան համար պարտական ենք մենաստանի ժամանակի յուսաւոր, իմաստուն եւ գործունեաց առաջնորդ՝ Խաչատուր Վրդ. Կեսարացուն:

Նա պատմական արուարձանի առաջին հիտակից, գրասէր եւ իր կոյման բարձրութեան միայն կանգնած հոգեւորականն է, որ խորապէս հասկանալով տպագրական արւեստի կատարելիք խոշոր դերը, վանքի դարգազած վարդապետների հետ, հերոսական աշխատանքով տառեր է ձուլում, թանաք պատրաստում եւ մի տպարան հիմ-

նում: Դա ոչ միայն Նոր-Ջուղայում, այլեւ ամբողջ Իրանում եւ Միջին Արեւելքում հիմնուած առաջին տպարանն է, ուր 1641 թուին, տպւում է Հայրանց Վարջ խորագրով հաստ գիրքը: Դա Նոր-Ջուղայի վանքի տպարանում հրատարակուած իրանահայ առաջին գիրքն է, որի ետեւում ցրանում է մինաստանի վաստակաւոր հոգեւորական, գրասէր առաջնորդ, Իրանի ամենաառաջին տպարանի հիմնադիր եւ Նոր-Ջուղայի վանքում հրատարակուած առաջին հայերէն գրքի տպագրիչ Խաչատուր Վրդ. Կեսարացու պայծառ կերպարը:

Գնացէ՛ք Նոր-Ջուղայի Ս. Ամենաիրկէի Վանքը եւ այնտեղ պիտի տեսնէք մեղանից 325 երկար տարիներ առաջ մենաստանում տպուած Հայրանց Վարջ-ի մի քանի օրինակները եւ Խաչատուր Վրդ. Կեսարացու ձուլած հայերէն տառերի նմուշները, որոնք մինչեւ օրս էլ առանձին սիրով ու գուրգուրանքով պահւում են վանքի մատենադարանում:

Սրանք են ահա Հայ առաջին վաստակաւոր տպագրիչները, որոնց անունները այսօր առանձին խորհուրդ ունեն եւ յիշում ենք երախտագիտական ջերմ զգացումներով: Ներանց՝ Հայ ժողովրդին նուիրած գրքերից շատերն այսօր հաղուագիւտ են եւ առանձին սիրով ու ուրբողութեամբ են պահւում Նրեւանի ու արտասահմանի Հայ ու օտար մատենադարաններում, գրադարաններում եւ մասնաւոր գրասէրների մօտ: Այդ թանկագին հատորները վկայում են, որ Հայ ժողովրդին պատիւ բերող տպագրիչները, հայրենիքից բաժանուելով՝ հեռաւում ճանապարհներ են կտրել, ապրել օտարութեան մէջ եւ մի շարք դժուարութիւններ յաղթահարելով՝ նուիրել են իրենց լուսագոյնը եւ տպագրել մի շարք ուշագրաւ գրքեր, որպէսզի Հայ ժողովուրդը լուսաւորուի եւ պատուաւոր տեղ գրաւի քաղաքակրթ ժողովուրդների շարքում, որպէսզի Հայ մատենագրութեան գանձարանը հարստանայ եւ միշտ միտ մնայ Հայ մշակոյթի ջահը: Դա Հայ տպագրութեան եւ մշակոյթի զարգացման պատմութեան մէջ մի խոշոր երեւոյթ է:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆԸ

Փեհիլի (Իրան)